ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/17-2

ք. Երևան «24» մայիսի 2021 թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոտայքկոշ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամնետում.

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 240 300 /երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման,

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի [illegible] աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա,

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս [illegible] կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ինդունելու

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Կոտայքկոշ» ԲԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047	Հասցե՝ ք.Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13
ՀՎՀՀ՝ 01540062	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հ/Հ՝ 1570001965900100
Հ/Հ՝ 2470102796740000	ՀՎՀՀ 03506316
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելվ
« 24 » մայիսի 2021թ. կ
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/17-2 ծածկագրով պայմա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	Անվանում	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակ	Մատակարարում		
									Հասցե	Ենթակա քանակ	Ժամկետներ
2	18221100/1	Բաճկոն ձմեռային /անջրաթափանց/	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Բաճկոնը կարվում է 240 – 250 գ/մ² մակերեսային խտությամբ կտորից: Կտորի բաղադրությունը առնվազն 40% բամբակ, 60% պոլիեսթեր, Կտորը ջրակայուն: Գործվածքի բաղադրության թույլատրելի շեղումը մինչև 3%: Կտորի չափսերի փոփոխությունը 5 անգամյա լվանալուց հետո ըստ հիմքի չպետք է գերազանցի - 3 %, ըստ միջնափելի - 1% Բաճկոնի գույնի երանգը՝ պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով է ՝ գոտկատեղից 12 – 15 սմ ներքև: Առաջամասը և ետևամասը ձևավորվում են զուգահեռ բաժանված զարդակակրերով: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածը մշակվում է 4-5 սմ լայնությամբ մանժետներով, իսկ փակումն իրականացվում է շղթաներով: Գրպանները մշակված են մի կողմից սև գույնի մետքսյա աստառից, որի մակերեսային	հատ	11136	1202688	108	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	108	Պայման ագիրը կնքելու օրվանից հետո 25 օրվա ընթացքում

				խտությունը կազմում է ոչ պակաս 55-60 գ/մ2, իսկ մյուս կողմից սինթեպոնով մգդակված աստառից: Բաճկոնի օձիքը կանգուն է՝ եզրային մասի անկումային մշակմամբ: Բաճկոնը կոճկվում է ձևավոր գլխիկով շղթայով: Բաճկոնի թևերի մանժետները մշակվում են Պենյա ռիբանա կտորը գործվածքից, որոնք թևքին միանում են լրացուցիչ մշակված աստառի միջոցով: Բաճկոնի թևքերը ձևավորվում են զուգահեռ բաժանված զարդակակրերով, որոնք բաճկոնի ազատ վիճակում պետք է նույն մակարդակի վրա համընկնեն առաջամասի և ետևամասի հետ: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ2 խտությամբ սինթեպոն, իսկ թևքերին 200 գ/մ2 խտությամբ սինթեպոն: Սինթեպոնը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 55-60 գ/մ2: Բաճկոնի կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ ասեղնագործման եղակակով տեղադրվում է Հանրային Հեռուստատեսության բազմագույն փոքր տարբերանշանը, իսկ մեջքի հատվածում՝ ասեղնագործման եղակակով Հանրային Հեռուստատեսության բազմագույն մեծ						

				տարբերանշանը՝ պատկերների համաչափության պահպանմամբ : Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 2 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Անհրաժեշտ քանականությունները ըստ չափսերի. XS-2 հատ, S –14 հատ, M-32 հատ, L-27 հատ, XL- 23 հատ, XXL- 10						
3	18331300/1	Շապիկ պոլո կարճաթև	«Կոտայքկոշ ԲԲԸ	Պոլո շապիկը կարվում է բարձրորակ Պենյա Պիկե կտորից՝ 230 գ/մ2 մակերեսային խտությամբ: Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5 % պոլիէսթեր: Կտորը պետք է ունենա ձգվողականություն մարմին հարմարավետ գրկելու համար: Շապիկը կարճաթև է, վզի հատվածում օձիքով, և կոճակներով կոճկվող մանժետով: Օձիքը բարձրորակ Պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Կտորի հիմնական գույնի երանգը՝ պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ /10 հատ շապիկ սպիտակ գույնի է, առանց մեջքի վրա տպագրության/: Թելը, որից կարվելու են շապիկները՝	Հատ	3948	714588	181		181

				Բարձրորակ նյութից պատրաստված 95%, բամբակ 5% (150), 2/1 էլաստան կոմբինացիայով: Հագուստի չափսերի աղյուսակը ընդգրկում է հետևյալ չափսերը՝ XS-2 հատ, S -22 հատ, M-45 հատ, L-52 հատ, XL- 44 հատ, XXL- 16 հատ: Գնումը կատարվում է ըստ գնանշման: Գները նշված են ՀՀ դրամով: Հագուստի չափսերի աղյուսակը կցվում է գնանշմանը: Գները պետք է նշված լինեն ԱԱՀ-ով: Գները պետք է նշված լինեն ՀՀ դրամով: Գները պետք է նշված լինեն ՀՀ դրամով: Գները պետք է նշված լինեն ՀՀ դրամ

4	18331300/2	Շապիկ պոլո երկարաթև	«Կոտայքկոշ ԲԲԸ	Պոլո շապիկը կարվում է բարձրորակ Պենյա Պիկե կտորից՝ 220 գ/մ2 մակերեսային խտությամբ : Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5 % լայկրա: Կտորը պետք է ունենա ձգվողականություն մարմին հարմարավետ գրկելու համար: Շապիկը երկարաթև է, վզի հատվածում օձիքով և կոճակներով կոճկվող մանժետով: Օձիքը բարձրորակ պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Կտորի հիմնական գույնի երանգը՝ պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ : Թելը, որից կարվելու են շապիկները՝ բաղադրությունը պոլիէսթեր 95%, էլաստան 5%, (150), 2/1 հարաբերակցությամբ: Շապիկի ուսագլուխները և թևքերի վերջավորությունը մշակվում են սպիտակ գույնի կանթերով: Թևքերի վերջավորությունը պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Շապիկի կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ ասեղնագործման եղակակով տեղադրվում է Հանրային Հեռուստատեսության բազմագույն փոքր տարբերանշանը, իսկ մեջքի հատվածում տպագրության եղանակով ՝ Հանրային Հեռուստատեսության բազմագույն մեծ տարբերանշանը՝ պատկերների համաչափության պահպանմամբ : Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Շապիկի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ	Հատ	4908	530064	108		108

				բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: XS Անհրաժեշտ քանականությունները ըստ չափսերի. XS-2 հատ, S –11 հատ, M-32 հատ, L-26 հատ, XL- 26 հատ, XXL- 111						
5	18111100/1	Բանվորական արտահագուստ	«Կոտայքկոշ ԲԲԸ	Արտահագուստը պետք է կարվի 260 – 265 գ/մ² մակերեսային խտությամբ կտորից: Կտորի բաղադրությունը 80% բամբակ, 20% պոլիեսթեր: Կտորը ջրակայուն: Գործվածքի բաղադրության թույլատրելի շեղումը մինչև 3%: Արտահագուստի գունային համադրություն՝ պարտադիր պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի: Արտահագուստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, ներքևի հատվածում տեղադրված գոտի՝ ռեզինե մանժետով: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում 5 սմ լայնությամբ ռեզինե	հատ	13608	258552	19		19

				մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով: Պաշտպանող կափույրը միանում է առաջամասին երեք զույգ 7 սմ երկարությամբ կպչունային ժապավեններով: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածն մշակված է նեղ երիզներով, որոնց մեջտեղում տեղադրված են նեյլոնե շղթաներ: Գրպանները մշակված են սև գույնի բամբակյա աստառից, որի մակերեսային խտությունը կազմում է ոչ պակաս 140 գ/մ2 : Բաճկոնն ունի նաև 2 վրադիր ծավալային գրպան կրծքամասի աջ և ձախ հատվածներում: Կրծքամասի գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն ներսինից 1-2 մմ նեղ: Կափույրը մշակվում է մի կողմից ուղիղ, իսկ մյուս կողմից շեղակի ձևվածքով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպաններները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպանները չաղտոտելու համար: Կրծքային գրպանները փակվում է կպչունային փականներով: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին						

				տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով, Բաճկոնի կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ ասեղնագործման եղակակով տեղադրվում է Հանրային Հեռուստատեսության բազմագույն փոքր տարբերանշանը, իսկ մեջքի հատվածում՝ ասեղնագործման եղակակով Հանրային Հեռուստատեսության բազմագույն մեծ տարբերանշանը՝ պատկերների համաչափության պահպանմամբ : Տաբատը ուղիղ ձևվածքի, առջևից 2 կողային ներսի գրպաններով և 2 վրադիր ծավալային գրպաններով ծնկամասի հատվածում: Կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է, որոնց մուտքի հատվածն մշակված է նեղ երիզներով: Վրադիր գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն ներսնինից 1-2 մմ նեղ: Վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպաններն չաղտոտելու համար: գրպանները փակվում են կպչունային փականներով: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը						

				կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, Տաբատի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 5-6 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Անհրաժեշտ քանականությունները ըստ չափսերի. S –1 հատ, M-6 հատ, L-6 հատ, XL- 6 հատ						
6	18111100/2	Մաքրուհու արտահագուստ	«Կոտայքկոշ ԲԲԸ	Մաքրուհու արտահագուստը բաղկացած է կիսախալաթրից և տաբատից: Մաքրուհու արտահագուստը կարվում է 210 – 220 գ/մ² մակերեսային խտությամբ կտորից: Կտորի բաղադրությունը առնվազն 47% բամբակ, 53% պոլիեսթեր, Կտորը ջրակայուն:	Հատ	9348	243048	26		26

				եղակակով տեղադրվում է Հանրային Հեռուստատեսության բազմագույն փոքր տարբերանշանը ՝ պատկերների համաչափության պահպանմամբ : Տաբատն ուղիղ ձխվածքով, գոտկատեղում մշակվում է շիբլետանման ռեզինով, կողային հատվածներում 2 ներսի գրպան: Կիսախալաթի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 4-5 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: M Անհրաժեշտ քանականությունները ըստ չափսերի. M-2 հատ, L-1 հատ, XL- 5 հատ, XXL-10 հատ, XXXL- 4, 4XL- 3 հատ, 5XL-1 հատ /հնարավոր են որոշ դեպքերում կիսախալաթի և տաբատի տարբեր չափսերի համատեղում մեկ կոմպլեկտում/						
7	18211500/2	Բաճկոն ձմեռային բանվորական /երկար/	«Կոտայքկոշ ԲԲԸ	Բաճկոնը կարվում է 240 – 250 գ/մ² մակերեսային խտությամբ կտորից: Կտորի բաղադրությունը առնվազն 40% բամբակ, 60% պոլիեսթեր, Կտորը ջրակայուն: Գործվածքի բաղադրության թույլատրելի շեղումը մինչև 3%:	Հատ	13788	137880	10		10

				Բաճկոնի գույների երանգը՝ պարտադիր պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով է ՝ գոտկատեղից 12 – 15 սմ ներքև: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածը մշակվում է 4-5 սմ լայնությամբ մանժետներով, իսկ փակումն իրականցվում է շղթաներով: Գրպանները մշակված են մի կողմից սև գույնի աստառից,, իսկ մյուս կողմից սինթեպոնով մգդակված աստառից: Բաճկոնի օձիքը կանգուն է: Բաճկոնը կոճկվում է շղթայով և կպչյուն ժապավեններով: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ2 խտությամբ սինթեպոն, իսկ թևքերին 200 գ/մ2 խտությամբ սինթեպոն: Սինթեպոնը մգդակված է սև գույնի աստառի հետ: Բաճկոնի կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ ասեղնագործման եղակակով տեղադրվում է Հանրային Հեռուստատեսության բազմագույն փոքր տարբերանշանը: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ:							

				Անհրաժեշտ քանակությունները ըստ չափսերի. S –1 հատ, M-1 հատ, L-2 հատ, XL- 6 հատ						
10	18811210/1	Բանվորական կոշիկներ	«Էքսպեռտ» ՍՊԸ	Կոշիկ աշխատանքային՝ նախատեսված բանվոր աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը պետք է համապատասխանի EN 20345 ստնդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, Ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները և լեզվակը պետք է կարված լինեն 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական նակատե կաշվից: Ճտքերի վերին մասը պետք է կարված լինի բաց մոխրագույն կաշվից կամ բարձրորակ բաց մոխրագույն կաշվե փոխարինիչից՝ բաղկացած երկու հատվածից, որից վերին հատվածի բարձրությունը կազմում է 3 սմ, իսկ ստորին U –աձև հատվածի մեջտեղի մասի բարձրությունը 6.5սմ: Բաց մոխրագույն կաշվե հատվածի ներսի կողմից պետք է տեղադրված լինի սպունգե ներդիր: Կոշիկի լեզվակը կողքերից մշակվում է լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու	Զույգ	15348	153480	10		10

				համար: Կոշիկի ընդհանուր բարձրությունը պետք է կազմի 15 սմ, իսկ ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից պետք է կազմի 10.5 սմ: Ճտքերին առկա են 5 շարք մետաղական արագաքուղ կեռիկներ, կապումը՝ երկգույնանի կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պետք է պատրաստված լինի երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտն պետք է լինի մոխրագույն գույնի, իսկ ստորին շերտն սև գույնի Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որն դարձնում է տակացուն զագատովկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկը պետք է ունենա մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկի ներսի հատվածում տեղադրված է նարնջագույն ծակոտկեն գործվածք: Կոշիկները պետք է արտադրված լինեն 2020 թ-ից ոչ շուտ: Անհրաժեշտ քանականությունները ըստ չափսերի. 40- 1հատ, 41- 2 հատ, 42- 3հատ, 43- 3 հատ, 45 – 1 հատ						

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Կոտայքկոշ» ԲԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047	Հասցե՝ ք.Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13
ՀՎՀՀ՝ 01540062	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հ/Հ՝ 1570001965900100
Հ/Հ՝ 2470102796740000	ՀՎՀՀ 03506316
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելվ
« 24 » մայիսի 2021թ. Լ
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/17-2 ծածկագրով պայման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2	18221100/1	Բաճկոն ձմեռային /անջրաթափանց/	0	0	0	0	0	0	1202688	1202688	1202688	1202688	1202688	1202688
3	18331300/1	Շապիկ պոլո կարճաթև	0	0	0	0	0	0	714588	714588	714588	714588	714588	714588
4	18331300/2	Շապիկ պոլո երկարաթև	0	0	0	0	0	0	530064	530064	530064	530064	530064	530064

5	18111100/1	Բանվորական արտահագուստ	0	0	0	0	0	0	258552	258552	258552	258552	258552	258552
6	18111100/2	Մաքրուհու արտահագուստ	0	0	0	0	0	0	243048	243048	243048	243048	243048	243048
7	18211500/2	Բաճկոն ձմեռային բանվորական /երկար/	0	0	0	0	0	0	137880	137880	137880	137880	137880	137880
10	18811210/1	Բանվորական կոշիկներ	0	0	0	0	0	0	153480	153480	153480	153480	153480	153480

ԳՆՈՐԴ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047

ՀՎՀՀ՝ 01540062

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2470102796740000

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոտայքկոշ» ԲԲԸ

Հասցե՝ ք.Աբովյան, 5-րդ փողոց, շինություն 13

Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1570001965900100

ՀՎՀՀ 03506316

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
« 24 » մայիսի 2021թ. կնքված
***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/17-2** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 24 » մայիսի 2021թ. կնքված
***ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/17-2** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն